կատարում է իրեն յանձնուած ծրագիրը եւ յարձակում է գործում Մուսուլմաննալի վրայ. իսկ Սոկրատ բէկ Մէլիք-Շահնազարեանը, փոխանակ Թթու Ջրի բարձունքները բռնելու եւ լուր տալու Անդրանիկին, Վարանդայի փաշտը վերցնելով իջնում է Քարին տակ գիւղը եւ բանակցութեան մէջ է մտնում քաղաքագլխի միջոցով՝ Շուշուայ թաթարների հետ:

Անցեալի պատմութիւնը նորից է կրկնուում եւ շնորհիւ Մելիք-Շահնազարեանների՝ Ղարաբաղի հայ ժողովուրդը Փանախանի օրերն է ապրում:

Ադրբէյջանի կառավարութիւնը, Բագուի անգլիական հրամանատարի միջոցով աշխատում է Անդրանիկի արշաւանքը կանգնեցնել եւ այդ նրան յաջողւում է:

Զօրավար Տոմսոնը (Բագուի անգլ. հրամանատարը) հեռագրում է Ղարաբաղի զինուած ուժերի հրամանատարներին եւ Գեներալ Անդրանիկին՝

«Դաշնակից պետութիւնների զօրքերը մըտել են Բագու. հրամայում եմ ամէն տեղ կըռիւները դադրեցնել: Եթէ որեւէ մէկը չի կատարել իմ հրամանը, նա կը համարուի Անգլիայի թշնամին եւ գործ կ'ունենայ մեզ հետ: Հայերի շարժումները, բացասական ազդեցութիւն կ'ունենան հայկական դատի վրայ, որը խաղաղ կերպով լուծւում է Եւրոպայում»:

Անդրանիկին ուղղուած հեռագիրը, Շուշուայ թաթարները մի Հարարեցի ծերունի միջոցով են ուղարկում Զանգեզուր. իսկ Ղարաբաղի հրամանատարներինը՝ քաղաքագլխի միջոցով:

Անդրանիկը ստանում է Տոմսոնի հեռագիրը, դադարեցնում է զինուորական գործողութիւնները. բայց իր գրաւած դիրքերում պահում է իր զօրքը:

Ընդամէնը 40 վերստ էր մնում, որ Անդրանիկը Շուշի հասնէր: Այդ ճանապարհն էլ առանց կռուի պիտի անցնէր, քանի որ ամենավտանգաւոր Մարքիզն ու խճուղու չորս կողմի դիրքերը վերցուած էին, մնում էր բարձրանալ Թթու Ջուրը եւ ապա խճուղով անցնել Շուշի: Բայց դժբախտաբար անգլիացիների (Տոմսոնի) հեռագիրը արգելք է հանդիսանում Անդրանիկին՝ Ղարաբաղ մտնելու:

Բացի այդ հեռագրից, Տոմսոնը Բագուից երկու սպայ (մէկը անգլիացի, միւսը Ֆրանսացի) է ուղարկում Շուշի, որպէսզի գնան Զանգեզուր եւ Անդրանիկի յառաջխաղացումը կանգնեցնեն:

Այդ սպաները Նոյեմբեր 19-ի առաւօտեան աւթոմոբիլով գալիս են Շուշի եւ նոյն օրը ճանապարհւում են Զանգեզուր, վերցնելով իրենց հետ Գ-ին, որպէս թարգման: «Ապառաժ»ի Կ. Կոմիտէն, երկտող է գրում Անդրանիկին, որ ուշադրութիւն չդարձնի անգլիական սպաների ուլտիմատումներին եւ առաջ շարժուի դէպի Շուշի: Միաժամանակ լիազօրում է Գ-ին մանրամասն զեկուցում տալու Անդրանիկին՝ Ղարաբաղի անցուդարձի մասին:

Սպաները Գ-ի հետ ճանապարհւում են Զանգեզուր: Ադրբէյջանի կառավարութիւնը և Հաջիսամլուի քրդերը, բոլոր միջոցներին դիմել էին, որպէսզի սպաները արագ Զանգեզուր հասնեն:

Սպաները մի ժամից հասնում են Թթու Ջրի Ադրբէյջանի պոստերը եւ ճերմակ դրօշակը պարզած իջնում են դէպի Աւդալլար:

Աւդալլարի դիրքապահ զինուորները, ճերմակ դրօշակը հեռուից տեսնելով, անմիջապէս յայտնում են Անդրանիկին: Անդրանիկը կարգադրում է չկրակել:

Աւթոմոբիլը հասնում է հայկական դիրքերին:

Սպաները իջնում են աւթոմոբիլից եւ հարցնում են դիրքապահ զինուորներից, թէ ո՞ւր է Անդրանիկը:

Զինուորներից մէկը ուղեկցում է սպաներին. Անդրանիկի մօտ, որը այնքան էլ հեռու չէր կանգնած:

Սպաները ներկայանում են Անդրանիկին եւ Զօրավար Տոմսոնի նամակն են յանձնում:

Տոմսոնը այդ նամակով յայտնում է Անդրանիկին, որ խաղաղ ճանապարհով, հայկական հարցը Եւրոպայում լուծւում է. իսկ զինուորական գործողութիւնները կարող են ազդել եւ վատ հետեւանքներ ունենալ:

Անդրանիկի թեւերը փշրւում են: Երկար մտածելուց յետոյ, սպաներին խօսք է տալիս իր կռիւները դադարեցնել: